

ՊԱՐՏԻՉԱԿՑԻՆ

ԺԵ. դարուն վերջերը հոգեւոր հովիւ մը Բիւթանիոյ մէկ գիւղը կը մտնէ՝ տեղացի Զայերը հեթանոսութենէ քրիստոնէութեան դարձնելու համար: Զոգեւոր հովիւը՝ Ամբրոսիոս վրդ. Ինքնատիոսեան, քանի մը շաբաթուան ընթացքին տեղացիները խորապէս ուսումնասիրելէ յետոյ, կ'ըսէ գեղջուկներուն եւ գեղջկուհիներուն.

-Ձեր շէնին կնքահայրը կ'ըլլամ ու կ'անուանեմ ձեր գիւղը Պարտիզակ:

-Ի՞նչու համար այդ անունը կը դնէք մեր գիւղին,- կը հարցնեն:

Ու հոգեւոր հովիւը կը պատասխանէ.

-Ամենքդ ալ մէյ մէկ ծաղիկ էք: Այսքան բարի ծաղիկ պարունակող գիւղ մը, բնականաբար, պէտք է կոչուի Պարտիզակ:

Պարտիզակցիները Ամբրոսիոս վրդ.ի օրով, փոխանակ քրիստոնէայ ըլլալու, կը դառնան մահմետական:

*

Պարտիզակցի այրերը կատաղի ծաղիկներ են՝ ո՛ր կուսակցութեան ալ պատկանին: Իսկ կիները կատաղի են, եթէ նոյնիսկ որեւէ կուսակցութեան չպատկանին:

Պարտիզակի կեսին ամէն մարդ զմայլած է, միւս կեսին ալ թող Պարտիզակցին ինք զմայլի:

Պարտիզակցին ծնած օրէն սիրահար է: Անխոնջ կերպով կը խաղայ սիրահարի դերեր, Րոմեոյէն մինչեւ Աշք Քերեմ:

Բարեգործութեան հիմնադիրը, անտարակոյս, Պարտիզակցին եղած է:

Պարտիզակցիները օգնութեան հասնողներ, փրկութեան վազողներ եւ կրակ մարողներ են: Անշուշտ, բազմաթիւ են նաեւ կրակ վառողները իրենց մէջ:

Պարտիզակցիէն ելած են շատ մը հոգեւորականներ: Ելած են նաեւ մտաւորականներ: Մարմնաւորականներ ալ շատ ելած են: Ելածին տեղ, սակայն, մտած են նոյնքան եւ, թերեւս ատելի, մտաւորականներ ու հոգեւորականներ, որով Պարտիզակցիէն բան չէ պակսած: